ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-մարտ)









Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ. հունվար-մարտին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 98.0%, 2020թ. հունվար-մարտին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.8%, իսկ 2019թ. հունվար-մարտին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.2%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-մարտին կազմել է 470 մլրդ. 411.6 մլն.դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատսխանաբար 20 մլրդ.11 մլն. և 46 մլրդ.619.5 մլն. դրամով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-մարտին կազմել է 75 մլրդ. 417.6 մլն.դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատսխանաբար 1 մլրդ. 795.7 մլն. և 596.7 մլն. դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-մարտին կազմել է 48 մլրդ. 778.6 մլն.դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4 մլրդ.864.3 մլն.և 1 մլրդ.50.4 մլն. դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-մարտին կազմել է 664 մլրդ.773 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7 մլրդ.242.6 մլն. և 13 մլրդ.60.3 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-մարտին կազմել է 403 մլրդ. 979 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 48 մլրդ.380.3 մլն և 17 մլրդ. 598.1 մլն. դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 96.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.7%-ի և 102.0%-ի պարագայում:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 99.0%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.5%-ի և 99.8%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 104.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 90.6%-ի և 110.8%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 94.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.2%-ի և 110.1%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 91.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 105.7%-ի և 117.3%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-մարտին կազմել է 129 մլրդ.456.4 մլն. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 42 մլրդ.332.4 մլն. և 55 մլրդ. 567.4 մլն. դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-մարտին կազմել է 258 մլրդ.118.3 մլն. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 26 մլրդ.864.1 մլն. և 19 մլրդ. 809.4 մլն. դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-մարտին կազմել է 77 մլրդ.819.2 մլն. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 4 մլրդ.495.2 մլն. և 11 մլրդ. 906 մլն. դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-մարտին կազմել է 5 մլրդ. 17.7 մլն. դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 47.5 մլն. դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1 մլրդ.44.5 մլն. դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 108.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և
2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 126.9%-ի և 95.5%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 88.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 103.8%-ի և 105.5%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 111.2%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.7%-ի և 96.9%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 100.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 82.2%-ի և 99.8%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-մարտին կազմել է 61 մլրդ. 975.7 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 51 մլրդ. 213 մլն. և 41 մլրդ.624.7 մլն. դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-մարտին կազմել է 74 մլրդ. 353 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7 մլրդ. 868.4 մլն. և 41 մլրդ. 624.7 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հուվար-մարտին կազմել է 115 մլրդ. 367.1 մլն. դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ. 608.8 մլն. և 17 մլրդ. 935.8 մլն. դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 63.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 108.5%-ի և 140.0%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 112.8%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.4%-ի և 108.0%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 101.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112.9%-ի և 120.34%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2021թ. հունվար-մարտին 2020թ. հունվար-մարտի նկատմամբ կազմել է 105.2%, 2020թ. հունվար-մարտին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 99.9%, 2019թ. հունվար-մարտին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.5%: ՍԳԻ-ն 2021թ.մարտին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 103.8%, 2020թ.մարտին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 101.7%, 2019թ.մարտին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 102.6%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2021թ. մարտի վերջի դրությամբ կազմել է 1,264,986.0 մլն դրամ, ինչը 276 մլրդ. 747 մլն դրամով կամ 28%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 545 մլրդ.15 մլն. դրամով կամ 75.7%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2021թ. մարտի դրությամբ կազմել է 90568 մարդ, ինչը 4678 մարդով կամ 5.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 7850 մարդով կամ 9.5%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2021թ. մարտի դրությամբ կազմել է 62999 մարդ, ինչը 1284 մարդով կամ 2.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2030 մարդով կամ 3.1%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2021թ. հունվար-մարտին կազմել է 1 մլրդ. 509.3 մլն. դոլար, ինչը 69.9 մլն. դոլարով կամ 4.4%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 121.9 մլն. դոլարով կամ 7.5%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2021թ. հունվար-մարտին կազմել է -363.5 մլն. դոլար, ինչը 107.7 մլն. դոլարով կամ 22.9%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 180.0 մլն. դոլարով կամ 33.1%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2021թ. հունվար-մարտին կազմել է 572.9 մլն դոլար, ինչը 18.9 մլն. դոլարով կամ 3.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 29.1 մլն. դոլարով կամ 5.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2021թ. հունվար-մարտին կազմել է 936.4 մլն դոլար, ինչը 88.8 մլն. դոլարով կամ 8.7%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 151.0 մլն. դոլարով կամ 13.9%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2021թ. հունվար-մարտին նախնական գնահատմամբ կազմել է 194109 դրամ, ինչը 3973 դրամով կամ 2.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 20045 դրամով կամ 11.5%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2021թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 55 մլրդ.607.8 մլն. դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -272,235.6 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 327,843.4 մլն. դրամ: 2020թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 38 մլրդ. 7.3 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -1,537.4 և -36,469.9 մլն դրամ: 2019թ. հունվար-մարտին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 31,245.7 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -5,387.1 և -25,858.6 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ